ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՐԻԿ ԱԼԵՔՍԵՅԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՇՈՐԹՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРЗУМАНЯН ЭРИК АЛЕКСЕЕВИЧ

ПРОБЛЕМЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВЫМОГАТЕЛЬСТВО

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - “Уголовное право и криминология, уголовно-исполнительное право”

ЕРЕВАН 2017

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս.Վ. Առաքելյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ա. Դիլբանդյան**
	իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Տ.Վ. Սիմոնյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. փետրվարի 23-ին՝ ժամը 14^{30}-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ **Ա.Ա. Մանասյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель:	доктор юридических наук, профессор **С.В. Аракелян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор **С.А. Дилбандян**
	кандидат юридических наук, доцент **Т.В. Симонян**
Ведущая организация:	**Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 23-го февраля 2018г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (адрес: 0025, г.Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 22-го января 2018г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **А.А. Манасян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գրանցված հանցագործությունների մեծ մասը սեփականության դեմ ուղղվածներն են, որոնց շարքում առկա են նաև շորթման ոչ փոքրաթիվ դեպքեր: Ճիշտ է, վերջին տարիներին պաշտոնապես գրանցված շորթման դեպքերը սակավաթիվ են, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ հանցավոր դրսևորման լատենտայնության բարձր մակարդակը: Շորթման հատկանիշներ պարունակող բազմաթիվ հանցավոր արարքներ տարբեր պատճառներով չեն արտացոլվում պաշտոնական վիճակագրական հաշվետվություններում՝ նպաստելով անպատժելիության մթնոլորտի ձևավորմանն ու խորացմանը: Ուստի միայն պաշտոնական վիճակագրական տվյալները հիմք ընդունելով, դժվար է խոսել շորթման դեմ պայքարի արդյունավետության բարձրացման մասին:

Իրավիճակն ավելի է բարդանում օրենսդրական դաշտում առկա թերությունների և բացթողումների հետևանքով: Մեր կողմից ԼՂՀ քրեական օրենսգրքի, ինչպես նաև քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ դեպքերում իրավակիրառողների գործունեության անարդյունավետությունը պայմանավորված է հենց օրենսդրական կարգավորումների անկատարությամբ:

Այս հանգամանքները, ինչպես նաև հայրենական քրեական իրավունքի դոկտրինայում թեմայի խորությամբ ուսումնասիրված չլինելը և տեսական գրականության մեջ շորթման վերաբերյալ բազմաթիվ հարցերի շուրջ առկա ոչ միատեսակ ըմբռնումներն օբյեկտիվորեն վկայում են հետազոտության թեմայի արդիականության մասին:

Թեմայի մշակվածության աստիճանը: Շորթման քրեաիրավական և կրիմինալոգիական տարատեսակ հիմնախնդիրները հայրենական քրեական իրավունքում մենագրության կամ ատենախոսության տեսքով չեն ուսումնասիրվել: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ շահադիտական-բռնի հանցագործությունների, այդ թվում՝ շորթման որոշ հիմնախնդիրներին վերաբերող առանձին հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են հայ գիտնականներ Ա.Հ. Գաբուզյանը, Ս.Ս. Ավետիսյանը, Ա.Ռ. Մարգարյանը, Դ.Ռ. Հունանյանը և այլք:

Արտասահմանյան գրականության մեջ շորթման քրեաիրավական հիմնախնդիրներին իրենց աշխատություններում անդրադարձել են Ն.Ի. Կորժանսկին, Օ.Վ. Կորյագինան, Լ.Դ. Գաուխմանը, Ս.Վ. Մաքսիմովը, Վ.Ն. Կուցը, Վ.Ս. Մինսկայան, Ֆ.Յու. Սաֆինը, Գ.Լ. Կրիգերը, Ա.Ի. Ռարոգը, Ա.Դ. Շիշկինը, Ի.Ֆ. Պերովը, Ն.Ի. Մելնիկը, Յու.Ի. Շեվցովը, Ս. Մ. Կոչոյին, Վ. Ն. Սաֆոնովը և ուրիշներ:

Նշված հեղինակների աշխատություններն, անշուշտ, մեծ ներդրում ունեն շորթման դեմ պայքարի հետ կապված տարատեսակ խնդիրների հետազոտության գործում: Մեր կողմից հետազոտվող թեման, սակայն, դրանցով չի սպառվել, և դրա հետ կապված մի շարք հիմնախնդիրներ հետագա գիտական ուսումնասիրությունների կարիք են զգում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության օբյեկտը շորթման քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներն են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Առարկան են ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված շորթման հանցակազմի տեսական վերլուծության, օրենսդրական սահմանման, դրա կատարելագործման, գործնական կիրառման հարցերը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում շորթումների վիճակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, քննարկվող հանցանքները կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները, տվյալ հանցագործության տարբեր դրսևորումներին նպաստող գործոնները և դրանց կանխարգելման ընդհանուր-սոցիալական ու հատուկ-կրիմինալոգիական բնույթի միջոցառումները:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Սույն հետազոտության հիմնական նպատակը շորթման քրեաիրավական հիմնախնդիրների համալիր վերլուծությունն է:

Նշված նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- բացահայտել շորթման համար քրեական պատասխանատվության զարգացման պատմությունը,
- վերլուծել շորթման հատկանիշներն ըստ ԼՂՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների,
- բացահայտել ներպետական օրենսդրությամբ շորթման համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի թերությունները,
- վեր հանել շորթման՝ հարակից այլ հանցագործություններից սահմանազատման հատկանիշները,
- ուսումնասիրել ԼՂՀ-ում կատարվող շորթումների որակական և քանակական ցուցանիշները՝ վիճակը (մակարդակը), կառուցվածքն ու շարժընթացը,
- բացահայտել ԼՂՀ-ում շորթումների ընդհանուր-սոցիալական և հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման հիմնական ուղղությունները,
- մշակել ԼՂՀ քրեական գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված տեսականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում իմացության դիալեկտիկական, տրամաբանա-

կան, անալիզի, սինթեզի, անալոգիայի, պատմահիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակագիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդները: Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների վերլուծության, համեմատական-իրավական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության տեսական հիմքը: Սույն ատենախոսության տեսական հիմքն են կազմել քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները:

Հետազոտության իրավական հիմքը: Սույն հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ԼՂՀ քրեական, քաղաքացիական օրենսգրքերը, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքը, ՀՀ քրեական օրենսգիրքը, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Լեհաստանի, Հոլանդիայի, Դանիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Իսպանիայի, Բուլղարիայի, Չինաստանի, Ճապոնիայի քրեական օրենսգրքերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել 2000-2013թթ. ԼՂՀ-ի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննված քրեական գործերը, շորթումների վերաբերյալ քննչական պրակտիկայի նյութերը, ԼՂՀ ոստիկանության ԻԿ վիճակագրական տվյալները, ԼՂՀ գլխավոր դատախազության պաշտոնական վիճակագրական տվյալները:

Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական գիտության մեջ շորթման քրեահիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել ԼՂՀ գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ քրեական իրավունք և կրիմինալոգիա դասավանդելիս:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև տեղ են գտել հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության գիտական նորույթը, նախ և առաջ, պայմանավորված է ԼՂՀ-ում կատարվող շորթումների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների տեսական համալիր ուսումնասիրությունների բացակայությամբ:

Շորթման համար քրեական պատասխանատվություն նախատեսող ներպետական քրեաիրավական նորմը կատարելագործման կարիք է զգում, իսկ քննարկվող հանցակազմի հատկանիշների մանրազնին վերլուծությունը, ինչպես նաև դրանում առկա թերությունների, բացթողումների, դրանց վերացման հնարավոր ուղիների մշակման վերաբերյալ ուսումնասիրությունը բացակայում է:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում շորթման նպատակի բացակայությունը վեճերի տեղիք է տալիս այն առումով, թե արդյո՞ք շորթումը կարող է կատարվել միայն շահադիտական շարժառիթով, թե՞ հնարավոր են նաև այլ դրդապատճառներ:

Կարծիքներ կան, որ շորթման հանցակազմում գույքային օգուտ ստանալու նպատակի նախատեսումը հնարավորություն կտա խուսափել նման հարցադրումներից: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այլ շահադիտական շարժառիթի ուղղակի նախատեսման դեպքում քննարկվող հոդվածի կարգավորման տիրույթից դուրս կմնան այլ շարժառիթներով կատարվող շորթման թեկուզև փոքրաթիվ դեպքերը, երբ, օրինակ՝ հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում տուժողին պատժելուն, նրանից վրեժ լուծելուն և այլն: Ուստի, գտնում ենք, որ նման լրացման անհրաժեշտությունը բացակայում է:

2. Հաշվի առնելով, որ տուժողի կամքի վրա ներազդելու մեխանիզմները կարող են տարբեր լինել, գտնում ենք, որ սպառնալիքի տեսակների սպառիչ թվարկումը ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի դիսպոզիցիայում նպատակահարմար չէ: Այդ առումով առաջարկում ենք ընդարձակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի դիսպոզիցիան և «կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով» բառերից հետո լրացնել այն հետևյալ բովանդակությամբ նոր բառերով՝ «կամ հարկադրանքի այլ եղանակներով:»:

3. Համակողմանի քննարկման առարկա դարձնելով շորթման առարկային վերաբերող խնդիրները՝ առաջարկում ենք ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված «պահանջը» ձևակերպել հետևյալ կերպ. «(…) ուրիշի գույքը հանձնելու, գույքային բնույթի այլ գործողություն կատարելու կամ գույքային բնույթի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու պահանջը՝(…)»: Առաջարկվող կարգավորման պայմաններում շորթ-

ման հանցակազմի կարգավորման տիրույթից դուրս չեն մնա այն դեպքերը, երբ հանցավորը տուժողից պահանջում է ձեռնպահ մնալ իր գույքային իրավունքների իրացումից (օրինակ՝ ժառանգության ստացման համար օրենքով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելուց կամ փոխառության գումարը հետ պահանջելուց):

4. Քանի որ շորթման հանցակազմում էական վնասի և առհասարակ, դեռևս չհասցված վնասի գնահատումը գրեթե անհնարին է՝ պայմանավորված հանցակազմի ձևական լինելով: Մեր կարծիքով, սակայն, ճիշտ չէ կոնկրետ դեպքում «էական» գնահատողական հասկացության կիրառումը, հետևապես շորթման դեպքում, օրինակ, գույքային պահանջներ ներկայացնելը՝ համապատասխան տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով, որոնք ունակ են վնաս պատճառել անձին, բավարար են արարքը շորթում որակելու համար:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, թեև, շանտաժի բովանդակությունը ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասում ըստ էության բացահայտվում է, սակայն «շանտաժ» հասկացացությունը դրանում ուղղակիորեն չի նշվում և այն, որ «շանտաժ» տերմինն, առանց դրա բովանդակության բացահայտման, գործածվում է ԼՂՀ քրեական օրենսգրքի մի քանի այլ հոդվածներում, երևույթի նկարագրության միասնականության ապահովման, ինչպես նաև տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ ենք համարում ամրագրել «շանտաժ» հասկացությունը՝ բացահայտելով դրա բովանդակությունը: Ուստի, առաջարկում ենք ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«(...) Շանտաժն իրական կամ մտացածին տեղեկությունների հրապարակման սպառնալիքն է, որն ուղղված է անձին կամ նրա մերձավորին արատավորելուն կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառելուն:»:

6. ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ կերպով թվարկվում են շորթման պահանջի ամրապնդմանն ուղղված սպառնալիքի տեսակները, որոնք են՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, ինչպես նաև անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքները: Նշված հոդվածի 2-րդ մասում՝ որպես ծանրացնող հանգամանք, հոդվածի 1-ին մասում թվարկված սպառնալիքի տեսակներից նախատեսվել է միայն մեկի՝ բռնության սպառնալիքի իրագործումը, այսինքն՝ բռնության փաստացի գոր-

ծադրումը, ինչն արդարացված չէ: Կարծում ենք, որ, եթե օրենսդիրը հոդվածի առաջին մասով նախատեսում է կոնկրետ գործողությունների կատարման սպառնալիքը, ապա նույն հոդվածի հաջորդ մասում պետք է նախատեսի այդ գործողությունների փաստացի կատարումը՝ որպես հանցագործության ծանրացնող հանգամանք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով» բառերը փոխարինել «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված սպառնալիքի իրագործմամբ» բառերով:

7. Գտնում ենք, որ շորթման տարբեր դրսևորումների համար դիֆերենցված քրեական պատասխանատվության սահմանման տեսանկյունից անհրաժեշտ է նաև շորթման հանցակազմի այնպիսի ծանրացնող հանգամանքների նախատեսումը, ինչպիսիք են զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ և պաշտոնեական դիրքն օգտագործելով շորթման կատարումը: Ուստի, առաջարկում ենք ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել համապատասխանաբար 4-րդ և 5-րդ ենթակետերով, որոնցով կսահմանվեն վերոհիշյալ ծանրացնող հանգամանքները, ընդ որում՝ «շորթումը պաշտոնեական դիրքն օգտագործելով» ծանրացնող հանգամանքի համար նախատեսվող սանկցիան պետք է պարունակի որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պարտադիր լրացուցիչ պատժատեսակը:

8. Շորթումը, որը կատարվել է որևէ սպառնալիքի իրականացմամբ առողջությանը ծանր վնաս պատճառելով, չպետք է նախատեսվի որպես շորթման առավել ծանրացնող հանգամանք: Նման դեպքերում արարքը պետք է որակվի բացառապես հանցագործությունների համակցության կանոններով: Նույն մոտեցումը պետք է դրսևորվի այլ հանցակազմերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան և բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածության*** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունք-

ների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության ***առաջին գլուխը՝*** «Շորթման ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, ներառում է չորս պարագրաֆ:

Առաջին գլխի 1-ին պարագրաֆում՝ «Շորթման հասկացությունը» վերտառությամբ, վերլուծելով որոշ պետությունների քրեական օրենքներում նկարագրված շորթման հանցակազմերը, հանգել ենք հետևության, որ, ի տարբերություն ԼՂՀ քրեական օրենսգրքի, որոշ արտասահմանյան երկրների օրենսդրություններում շորթման նպատակը ուղղակիորեն սահմանված է շորթման հոդվածի դիսպոզիցիայում: Մինչդեռ, այլ շահադիտական շարժառիթի ուղղակի նախատեսման դեպքում քննարկվող հոդվածի կարգավորման տիրույթից դուրս կմնան այլ շարժառիթով կատարվող շորթման թեկուզև փոքրաթիվ, բայց ոչ պակաս վտանգավոր դեպքերը:

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆում՝ «Շորթման հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ, փաստվել է, որ շորթման դեպքում հանցավոր ոտնձգությունն առաջին հերթին ուղղված է սեփականության հարաբերությունների դեմ, և, քանի որ անձնական շահերի նկատմամբ ոտնձգությունը միայն միջոց է շահադիտական նպատակներին հասնելու համար, ապա շորթման հիմնական օբյեկտ պետք է համարել հենց սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Միաժամանակ արձանագրվել է, որ շորթման հանցակազմի առարկա, ինչպես հետևում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածից, հանդիսանում են գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, գույքային բնույթի այլ գործողությունները: Իսկ քաղաքացիական իրավունքում գույք հասկացությունն իր մեջ ներառում է ոչ միայն իրեր, իրերի համակցություն, նյութական արժեքներ, այլև գույքային իրավունքներ և պարտականություններ: Ուստի, գույքի նկատմամբ իրավունքը ներառվում է «գույք» հասկացության մեջ, և ԼՂՀ քրեական օրենսգրքի հոդված 188-ի դիսպոզիցիայում նշված «գույքի նկատմամբ իրավունք» հասկացությունն ավելորդ է:

Շորթման օբյեկտիվ կողմի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա մեկնաբանությունների լույսի ներքո արվել է հետևություն, որ որոշակի տարակարծություններով հանդերձ, շորթման հասկացության մեջ ելակետային նշանակություն ունի «պահանջ» եզրույթը:

Առաջին գլխի 3-րդ պարագրաֆում՝ «Շորթման հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ, փաստվում է, որ շորթումը բոլոր դեպքերում կատարվում է ուղղակի դիտավորությամբ, սակայն հետևանքների նկատմամբ կարող է դրսևորվել թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի դիտավորություն, ինչն արարքի որակման համար որևէ նշանակություն չունի: Շորթողի նպատակը պահանջածն ամեն գնով ստանալն է: Հակառակ դեպքում,

եթե ընդունենք, որ շորթողը գործում է ոչ թե հետևանքներին հասնելու համար, այլ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված որևէ գործողություն կատարելով, շորթման էությունը կխեղաթյուրվի: Շորթումը հանցագործություն է, որը ոտնձգում է գույքային հարաբերությունների դեմ, սուբյեկտիվ կողմից իրականացվում է միայն ուղղակի դիտավորությամբ և հիմնականում շահադիտական շարժառիթով:

Առաջին գլխի 4-րդ պարագրաֆում՝ «Շորթումների կրիմինոլոգիական բնութագիրը» վերտառությամբ, նախ, ներկայացվում է ԼՂՀ 2000-2015 թթ. շորթումների շարժընթացի վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, վերլուծվում են ուշադրության արժանի ցուցանիշները և դրանց հնարավոր պատճառները:

Այնուհետև փաստվում է, որ որքան էլ հուսադրող լինեն պաշտոնական վիճակագրության տվյալները, չպետք է մոռանալ, որ շորթումներն ունեն լատենտայնության բարձր մակարդակ, և իրականում դրանց թիվը կարող է շատ ավելի մեծ լինել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ հանցագործությունը իրավապահ մարմինների կողմից չգրանցելով, իրավապահ մարմիններին հանցագործության մասին չտեղեկացնելով (նրանց աշխատանքի նկատմամբ անվստահության, սեփական ուժերով խնդիրը լուծելու ցանկության, վախի, պատճառված վնասի աննշանության, սեփական հանցավոր գործունեությունը թաքցնելու պատճառով և այլն):

Նշված պարագրաֆի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև շորթում կատարող անձանց կրիմինալոգիական բնութագրին: Այդ համատեքստում փաստվում է, որ ԼՂՀ-ում շորթողների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներ են: Շորթում կատարող անձանց տարիքային խմբերի կապակցությամբ նշվում է, որ առավել ակտիվ են երիտասարդները. շորթումների 55%-ը կատարվել է 19-29, 25%-ը՝ 32-39, 10%-ը՝ 43-47, 10%-ը՝ 52-59 տարիքային խմբին պատկանող անձանց կողմից:

Միաժամանակ նշվում է, որ շորթողների հիմնական մասն ունի միջնակարգ կրթություն, ինչպես նաև այն, որ նրանց մեջ գերակշռում են չաշխատող և չամուսնացած անձինք:

Շորթողի վարքագծի պատճառները հաճախ պայմանավորված են լինում տուժողի վարքագծով, նրա անձնական առանձնահատկություններով, ինչպես նաև հանցագործի հետ ունեցած կապերի և փոխհարաբերությունների բնույթով: Այդ պատճառով էլ հանցավոր վարքագծի պատճառների և նպաստող պայմանների բացահայտման, դրանց վերացման կամ չեզոքացման համար քննարկվում են ոչ միայն հանցագործի, այլև տուժողի անձը բնութագրող առանձնահատկությունները: Փաստվում է, որ տղամարդիկ կանանց համեմատ 3 անգամ ավելի հաճախ են հայտնվում շորթման «զոհի» կարգավիճակում: Տղամարդկանց վիկտիմիզացման բարձր մակարդակը առաջին

հերթին պայմանավորված է նյութական միջոցների ձեռք բերմանը նրանց առավել ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև որոշակի մասնագիտություններում նրանց գերակշռությամբ: Միևնույն ժամանակ արձանագրվում է, որ ԼՂՀ-ում շորթումներից տուժած անձանց կրթական մակարդակը բավականին բարձր է՝ նրանց զգալի մասը հանցագործության կատարման պահին ունեցել է բարձրագույն կրթություն:

Վիկտիմիզացման պատճառները քննարկելիս, կարևորվում է նաև տուժողի և հանցանք կատարողի միջև գոյություն ունեցող կապի բնույթի վերլուծությունը: Մասնավորապես, նշվում է, որ ԼՂՀ-ում բռնությամբ զուգորդված շորթումներից տուժողների 46%-ը եղել են հանցանք կատարած անձանց ծանոթները կամ մտերիմները, իսկ 15%-ը՝ նրանց ազգականները կամ բարեկամները: Բացի այդ, փաստվում է, որ շորթում կատարած անձանց և տուժողների միջև առկա հարաբերությունների 73%-ը եղել են չեզոք կամ չբացահայտված, 12%-ի դեպքում առկա են եղել լավ հարաբերություններ, իսկ 15%-ի դեպքում՝ վատ:

Բացի այդ, շորթման ընդհանուր կանխարգելման շրջանակներում կարևորվել են հետևյալ միջոցառումները. աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումներ, չունևոր խավին նյութական օգնություն ցույց տալու հստակ մեխանիզմների մշակում (հատկապես դա վերաբերում է բազմազավակ ընտանիքներին, միայնակ մայրերին և այլ անձանց), նոր աշխատատեղերի բացում, գործազուրկների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում և աշխատանքով ապահովում, թափառաշրջիկների, մուրացկանների բացահայտում ու հաշվառում, հնարավորությունների սահմաններում նրանց բնակության վայրերով ապահովում, միգրացիոն պրոցեսների վերահսկում, դրանց կրիմինոգեն ազդեցության թուլացում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպմանն ուղղված միջոցառումներ:

Կարևորվել են նաև հատուկ-կրիմինոլոգիական կանխման միջոցառումները. իրավապահ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կրիմինոգեն վայրերի բացահայտումը, միջոցառումների իրականացումը՝ ուղղված հրազենի, սառը զենքի, զինամթերքի հայտնաբերմանն ու առգրավմանը, հանցավոր խմբավորումների ստեղծման կանխմանը, ինչպես նաև արդեն իսկ ստեղծված հանցավոր խմբավորումների բացահայտմանը և վերացմանը և այլն:

Նշվել է նաև, որ պետք է իրականացվեն շորթումների վիկտիմոլոգիական կանխմանն ուղված հետևյալ միջոցառումները. ՁԼՄ-ների միջոցով բնակչությանը համապատասխան տեղեկատվության տրամադրում՝ տարբեր կրիմինոգեն իրավիճակներում նրանց գործողությունների, շորթում կատարողների տիպային վարքագծի վերաբերյալ, կանոնավոր կերպով մոնիթորինգների իրականացում՝ երկրում վիկտիմոլոգիական վիճակի բացահայտման համար,

բնակչության շրջանում վիկտիմոլոգիական հարցումների անցկացում՝ վիկտիմիզացիայի իրական մասշտաբների բացահայտման նպատակով, դրանց հիման վրա կանխման համապատասխան միջոցառումների իրականացում, հանցագործությունից տուժած անձանց որակյալ իրավաբանական օգնությամբ ապահովելու գործուն երաշխիքների մշակում, հանցագործությունների կատարման, կրիմինոգեն վայրերի, հանցագործությունից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ բնակչությանը տեղեկատվությամբ ապահովում, հանցավոր ոտնձգության դեպքում ճիշտ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ խորհրդատվությունների մշակում:

Շորթումների ընդհանուր վիկտիմոլոգիական կանխման գործում էական նշանակություն ունի նաև համապատասխան սեմինարների անցկացումն այնպիսի անձանց հետ, որոնց մասնագիտական գործունեությունը և սոցիալական դիրքը բարձրացնում է նրանց վիկտիմայնությունը, ինչպես նաև համապատասխան զրույցների անցկացումն աշակերտների, ուսանողների, մանկավարժների շրջանում:

Ատենախոսության ***երկրորդ գլուխը***՝ «Շորթման հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքների որակման առանձնահատկություններն ու շորթման սահմանազատումը հարակից այլ հանցագործություններից» վերտառությամբ, ներառում է հինգ պարագրաֆ:

Երկրորդ գլխի 1-ին և 2-րդ պարագրաֆներում, համապատասխանաբար՝ «Շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանքները» և «Շորթման հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքները» վերտառություններով, հաջորդականությամբ վերլուծվել են շորթման՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները:

Արձանագրվել է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. եթե բռնություն գործադրելու սպառնալիքը հանցավորն իրագործում է, ապա առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելու, ծեծի, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելու դեպքերում արարքը որակվում է միայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և արարքը համապատասխան հոդվածներով լրացուցիչ որակելու անհրաժեշտություն չի առաջանում: Արարքը նույն կերպ է որակվում նաև այն դեպքում, երբ բռնության գործադրումը որևէ հետևանք չի առաջացնում, անկախ նրանից, թե հանցավորը ինչպիսի վնաս է ցանկացել պատճառել:

Այնուհետև հանցակցության տարբեր ձևերի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ արտահայտված մոտեցումների համատեքստում վերլուծության են ենթարկվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ մասի 3-րդ կետերով նախատեսված հանցակցության

երկու ձևերի՝ նախնական համաձայնությամբ խմբի և կազմակերպված խմբի, ինչպես նաև դրանց կողմից կատարված շորթումների առանձնահատկությունները:

Ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքների կապակցությամբ նշվում է, որ շորթման դեպքում, որը կատարվել է խոշոր չափերով, ծանրացնող հանգամանքն առկա կլինի, եթե հանցավորը տուժողին ներկայացնի խոշոր չափերով գույք հանձնելու պահանջ, իսկ առավել ծանրացնող հանգամանքը՝ եթե հանցավորը տուժողին ներկայացնի առանձնապես խոշոր չափերով գույք հանձնելու պահանջ: Այդ պահից քննարկվող ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքով շորթումը պետք է համարել ավարտված:

Շորթման տարբեր դրսևորումների համար դիֆերենցված պատասխանատվություն սահմանելու տեսանկյունից կարևորվել է, որ անհրաժեշտ է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ շորթման կատարումը, ինչպես նաև շորթումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով, նախատեսել որպես շորթման հանցակազմի ծանրացնող հանգամանքներ, ինչը կապահովի պատժի չափի որոշման հարցում տարբերակված մոտեցումը՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս:

Վերլուծելով շորթման կատարումը՝ անզգուշությամբ մահ կամ այլ ծանր հետևանքներ պատճառելով և առողջությանը ծանր վնաս պատճառելով ծանրացնող հանգամանքները, արձանագրվել է, որ, նախ, առողջությանը ծանր վնասի պատճառումը չպետք է նախատեսվեր որպես շորթման ծանրացնող հանգամանք, և արարքը պետք է որակվեր բացառապես հանցագործությունների համակցության կանոններով: Այնուհետև, անդրադառնալով անզգուշությամբ մահ կամ այլ ծանր հետևանքներ պատճառելու հետ կապված առավել ծանրացնող հանգամանքին, փաստվել է, որ քննարկվող առավել ծանրացնող հանգամանքի նախատեսումը լիովին տրամաբանական է: Չպետք է բացառել հնարավոր այն դեպքերը, երբ, նույնիսկ, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը իրադարձությունների պատահական զուգորդմամբ կհանգեցնի ծանր հետևանքների առաջացման, մասնավորապես՝ մարդու մահվան կամ առողջությանը ծանր վնաս պատճառելուն: Ուստի, առավել ծանրացնող տվյալ հանգամանքի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասից բացառման նպատակահարմարությունը բացառվել է:

Երկրորդ գլխի 3-րդ պարագրաֆում՝ «Շորթման սահմանազատումն ավազակությունից» վերտառությամբ, արձանագրվել է, որ ավազակության առարկան ավելի նեղ է, քան շորթմանը, որը ներառում է ոչ միայն գույքը, այլև գույքային իրավունքները, գույքային բնույթի գործողությունները: Մաս-

նավորապես, նշվել է, որ ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը տուժողի կամքի վրա ներգործելու, այն ճնշելու միջոց է: Շորթման դեպքում պահանջվող գույքը տվյալ պահին կարող է նաև տուժողի մոտ չլինել:

Բացի այդ, ավազակության ժամանակ գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության գործադրման կամ դրա գործադրման սպառնալիքի հետ միաժամանակ կամ դրա գործադրումից անմիջապես հետո, իսկ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է գույքը ստանալ հետագայում: Ավելին՝ շորթման ժամանակ, ի տարբերություն ավազակության, սպառնալիքը կարող է լինել անգամ քողարկված, սակայն բոլոր դեպքերում տուժողին պետք է հասկանալի լինի դրա իմաստը, և տուժողն ընկալի դրա իրականացման անխուսափելիությունը:

Միևնույն ժամանակ նշվել է, որ ավազակության ժամանակ հանցավորը գույքը վերցնում է դրա օրինական տիրապետողի կամքին հակառակ, իսկ շորթման դեպքում տուժողն ինքն է գույքը հանձնում հանցավորին, չնայած դա անում է հարկադրված՝ սպառնալիքի կամ բռնության ազդեցության տակ:

Թե՛ շորթումը և թե՛ ավազակությունը կատարվում են ուղղակի դիտավորությամբ, սակայն դիտավորության բովանդակությունը երկու դեպքերում տարբեր է: Մասնավորապես, ավազակային հարձակման դեպքում հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողի մոտ գտնվող գույքի անհապաղ հափշտակմանը, մինչդեռ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է տուժողից գույքը ստանալ ապագայում: Այն դեպքում, երբ տուժողը, սպառնալիքներից վախեցած, շորթողին հանձնում է այն գույքը, որը պետք է հանձներ ապագայում, արարքը պետք է որակվի շորթում, քանի որ որոշիչ պետք է համարվի հանցավորի դիտավորության ուղղվածությունը:

Եթե շորթողի պահանջը չի կատարվում, և հանցավորը, մերժում ստանալով, անմիջապես բռնություն է գործադրում ու վերցնում գույքը, ապա շորթումը, կախված գործադրված բռնության կամ դրա սպառնալիքի բնույթից, վերածվում է ավազակության կամ ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտի: Նման դեպքերում արարքը, պայմանավորված գործի հանգամանքներով, որակվում է կա՛մ ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտ, եթե գործադրված բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր է եղել, կա՛մ ավազակութուն՝ բռնության՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելու պարագայում:

Երկրորդ գլխի 4-րդ պարագրաֆում՝ «Շորթման սահմանազատումն ինքնիրավչությունից» վերտառությամբ, փաստվել է, որ շորթումը և ինքնիրավչությունը տարբերակվում են ոտնձգության օբյեկտով: Օբյեկտների միանգամայն տարբեր լինելու մասին է վկայում այս հանցագործությունների

տեղակայումը ԼՂՀ քրեական օրենսգրքի տարբեր գլուխներում. շորթումը տեղակայված է «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ», իսկ ինքնիրավչությունը՝ «Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ» գլխում:

Միաժամանակ նշվել է, որ ինքնիրավչության անմիջական օբյեկտը քաղաքացիների կողմից իրենց իրավունքների և ազատությունների իրականացման սահմանված կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերն ապահովող հասարակական հարաբերությունները: Շորթման հիմնական օբյեկտն, ինչպես նշվել է, սեփականության իրավունքն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդիսանալ անձի պատիվն ու արժանապատվությունը, անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունը, առողջությունն ապահովող հասարակական հարաբերությունները:

Ի տարբերություն ինքնիրավչության, շորթման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածի դիսպոզիցիայում թվարկվում են հանցագործության առարկայի տեսակները և, ելնելով դրա սահմանումից, արձանագրվում է, որ շորթումը հնարավոր է միայն ուրիշի գույքի, այսինքն՝ այնպիսի գույքի նկատմամբ, որի հետ կապված ոտնձգողը չունի ո՛չ իրական, ո՛չ էլ ենթադրյալ իրավունքներ:

Փաստվում է նաև, որ ինքնիրավչությունը նկարագրված է նյութական հանցակազմով և ավարտված է համարվում հետևանքների առաջացման պահից, մինչդեռ շորթումը նկարագրված է ձևական հանցակազմով, այսինքն՝ ավարտված է համարվում հանցավորի կողմից պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ հանրորեն վտանգավոր հետևանքներց:

Միևնույն ժամանակ, շորթումը և ինքնիրավչությունը տարբերվում են միմյանցից նաև սուբյեկտիվ կողմով: Շորթումն իր էությամբ շահադիտական-բռնի հանցագործություն, որը կատարվում է միայն ուղղակի, իսկ ինքնիրավչությունը՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Եվ, վերջապես, ինքնիրավչության սուբյեկտ է հանդիսանում 16, իսկ շորթման՝ 14 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Երկրորդ գլխի 5-րդ պարագրաֆում՝ «Շորթման սահմանազատումը կաշառքի շորթումից» վերտառությամբ, հիմնավորվում է, որ շորթման ներկայիս ձևակերպումն այնպիսին է, որ ամբողջ ծավալով չի կարող կիրառվել կաշառքի շորթման դեպքում: Ըստ էության, կաշառքի շորթումն իր բովանդակությամբ ավելի նեղ է: Կաշառքի շորթման դեպքում խոսքը պաշտոնատար անձի կողմից տուժողի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման սպառնալիքի մասին է, այսինքն՝ այն չի ընդգրկվում ԼՂՀ քր. օր.-ի 188-րդ հոդվածով սահմանված շորթման հասկացության շրջանակների մեջ:

Բացի այդ, նշվում է, որ շորթման և կաշառքի շորթման հանցակազմերը միմյանցից կարող են տարբերվել նաև հանցագործության առարկայով, քանի որ կաշառքի շորթման դեպքում հանցագործության առարկան ավելի լայն է սահմանված (որևէ այլ առավելություն ստանալը):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շորթումը տեղակայված է ԼՂՀ քրեական օրենսգրքի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, հանդիսանում է երկօբյեկտ հանցագործություն. հիմնական օբյեկտը սեփականության իրավունքն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդիսանալ անձի պատիվն ու արժանապատվությունը, անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունը, առողջությունն ապահովող հասարակական հարաբերությունները:

2. Շորթման առարկա են հանդիսանում ուրիշի գույքը, գույքային իրավունքները և գույքային բնույթի այլ գործողությունները: Օբյեկտիվ կողմը դրսևորվում է հանցավորի կողմից տուժողին պահանջ ներկայացնելով՝ հանձնել իրեն գույք կամ գույքի նկատմամբ իրավունք կամ իր օգտին կատարել գույքային բնույթի այլ գործողություններ: Ընդ որում, այդ պահանջը պետք է ամրապնդվի սպառնալիքով, որի տեսակները հստակ կանխորոշված են քննարկվող հոդվածով: Դրանք են՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքները:

3. Շորթումը նկարագրված է ձևական հանցակազմով, այսինքն՝ այն ավարտված է համարվում սպառնալիքով ուղեկցվող պահանջը ներկայացնելու պահից՝ անկախ նրանից, հանցավորը հասե՞լ է իր նպատակին թե՞ ոչ:

4. Սուբյեկտիվ կողմից այս հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, իսկ սուբյեկտը 14 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձն է:

5. Կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ շորթողների մեծամասնությունը 18-25 տարեկան չամուսնացած, մշտական աշխատանք չունեցող և միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ են: Վիկտիմոլոգիական հետազոտությունները փաստում են, որ շորթման «զոհի» կարգավիճակում ավելի շատ հայտնվում են մինչև 40 տարեկան տղամարդիկ:

6. Անդրադառնալով շորթման վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալներին, նշվել է, որ ԼՂՀ-ում շորթումների ամենամեծ թիվը գրանցվել է 2001 թվականին. արձանագրվել է շորթման 13 դեպք: Հաջորդ աճը գրանցվել է 2006 թվականին՝ 5 դեպք: 2011-2015թթ. գրանցվել է շորթման ընդամենը մեկ դեպք, իսկ վերջին 3 տարիների ընթացքում շորթման դեպքեր չեն գրանցվել: Որքան էլ հուսադրող լինեն պաշտոնական վիճակագրության տվյալները, չպետք է մոռանալ, որ սա միայն պաշտոնական վիճակագրություն է, իսկ շորթումներն, ինչպես նշվել է, ունեն լատենտայնության բարձր մակարդակ, և իրականում դրանց թիվը կարող է շատ ավելի մեծ լինել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ հանցագործությունը իրավապահ մարմինների կողմից չգրանցելով, իրավապահ մարմիններին հանցագործության մասին չտեղեկացնելով (նրանց աշխատանքի նկատմամբ անվստահության, սեփական ուժերով խնդիրը լուծելու ցանկության, վախի, պատճառված վնասի աննշանության, երբեմն՝ սեփական անօրինական գործունեությունը թաքցնելու պատճառով), և այլն:

7. Շորթման կանխարգելման տեսանկյունից օբյեկտիվ վիճակագրության հաշվառումն անչափ կարևոր է, քանի որ դրա բացակայությունը բերում է հանցագործության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի, ինչպես նաև զարգացման միտումների մասին հասարակության և պատկան մարմինների անտեղյակության: Ավելին՝ նման տեղեկությունների բացակայությունը հաճախ բերում է հանցավորության դեմ պայքարի ուժերի և միջոցների փոշիացման, մի շարք դեպքերում՝ օրենսդրական բարեփոխումների անիմաստ փորձերի և այլն:

8. Շորթման պատճառները բազմաթիվ են. գործազրկություն, սոցիալական ծանր դրություն, տուժողի իրավագիտակցության ցածր մակարդակ, ձեռնարկատերերի, նրանց ձեռնարկությունների և կազմակերպությունների իրավական և սոցիալական ոչ լիարժեք պաշտպանվածություն, իրավապահ մարմինների հանդեպ բնակչության անվստահություն, նախազգուշական-կանխարգելիչ միջոցառումների բացակայություն, հեռահաղորդակցության միջոցներով բռնության, ցոփ ու շվայտ կյանքի, ամեն գնով հարստացման քարոզում և այլն:

9. Պետության քրեական քաղաքականությունը պետք է միտված լինի այս պատճառների վերացմանը, ուստի, աշխատանքում ներկայացվել են շորթման ընդհանուր և հատուկ կանխմանն ուղղված համալիր միջոցառումներ, որոնցից հատկապես կարևորվել են հետևյալները. գործազրկության վերացմանն ուղղված միջոցառումներ՝ նոր աշխատատեղերի ստեղծում, գործազուրկների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում և աշխատանքով ապահովում, ՋԼՄ-ների միջոցով բնակչությանը համապատասխան տեղեկատվության տրամադրում՝ տարբեր կրիմինոգեն իրավիճակնե-

րում նրանց գործողությունների, հանցագործների, շորթում կատարողների տիպային վարքագծի վերաբերյալ, կանոնավոր կերպով մոնիթորինգների իրականացում՝ երկրում վիկտիմոլոգիական վիճակի բացահայտման համար, հանցագործությունից տուժած անձանց որակյալ իրավաբանական օգնության ապահովման գործուն երաշխիքների մշակում, հանցագործությունների կատարման, կրիմինոգեն վայրերի, հանցագործությունից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ բնակչությանը տեղեկատվությամբ ապահովում, հանցավոր ոտնձգության դեպքում ճիշտ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ խորհրդատվությունների մշակում, միջոցառումների իրականացում՝ ուղղված բնակչության շրջանում անտարբերության մթնոլորտի վերացմանը, իրավապահ մարմինների հանդեպ վստահության բարձրացմանը, հեռուստատեսությամբ քրեական աշխարհի ներկայացուցիչներին դրականորեն բնութագրելու արգելքների սահմանում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Շորթումների կանխման հատուկ միջոցների առանձնահատկությունները // «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1 (25) 2012, էջեր 72-77:
2. Շորթման որակման հետ կապված առանձին հարցերի մասին // «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2 (26) 2012, էջեր 130-138:
3. Շորթումների կանխարգելման որոշ հիմնախնդիրներ // «Լրատու» գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2013-1 (14), էջեր 10-19:
4. Շորթման հանցակազմի իրավական կարգավորման առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում // «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1/ 2016, էջեր 286-293:
5. Շորթման հասկացության կատարելագործման որոշ հիմնահարցեր // «Լրատու» գիտական հոդվածների ժողովածու, «Լիմուշ» հրատարակչություն, Երևան, 2017, էջեր 50-57:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված շորթումը հարակից այլ հանցագործություններից սահմանազատելու որոշ հիմնախնդիրներ // «Դատական Իշխանություն», «Անտարես» հրատարակչություն, մայիս-հունիս 5-6/215-216, Երևան, 2017, էջեր 72-77:

РЕЗЮМЕ

АРЗУМАНЯН ЭРИК АЛЕКСЕЕВИЧ

ПРОБЛЕМЫ УГАЛОВНОЙ ОТВЕТСТБЕННОСТИ ЗА ВЫМОГАТЕЛЬСТВО

Диссертация посвящена изучению основных уголовно-правовых проблем вымогательства в Нагорно Карабахской Республике.

Актуальность выбранной темы диссертационного исследования состоит в том, что вымогательство во все времена было серьезным препятствием жизнедеятельности как для юридических лиц, имеющих разный организационно-правовой статус, так и для физических лиц. В связи с этим, борьба с вымогательством была и будет оставаться одним из приоритетных направлений уголовной политики государства.

В частности, ситуация осложняется тем, что в законодательной сфере есть недостатки и упущения. Исследования уголовного кодекса и уголовных дел, расследованных в НКР, показывают, что во многих случаях неэффективность деятельности правохранительных органов обусловлена несовершенством законодательного урегулирования.

В связи с этим, научная новинка исследования обусловлена в первую очередь отсутствием теоретических комплексных исследований уголовно-правовых и криминологических проблем борьбы с вымогательством в НКР. В этой связи автором сделаны теоретические выводы, где представлены предложения о внесении дополнений и изменений в статью 188 уголовного кодекса НКР, направленных на более точное определение признаков состава вымогательства.

Исходя из вышеуказанной необходимости, автор проанализировал признаки вымогательства, согласно уголовному законодательству НКР и зарубежных стран; определил недостатки в правовых нормах, предусматривающих уголовную ответственность за вымогательство в соответствии с внутренним законодательством; выявил признаки, разграничивающие вымогательство от других смежных преступлений; изучил качественные и количественные по-

казатели вымогательств в НКР: состояние (уровень), структуру и динамику; выявил основные общесоциальные и специально-криминологические направления предупреждения вымогательств в НКР; разработал теоретически обоснованные рекомендации, направленные на усовершенствование уголовного законодательства и правоприменительной практики НКР.

В частности, автор предложил расширить диспозицию статьи 188 Уголовного кодекса НКР и после слов «или под угрозой применения насилия либо уничтожения или (повреждения) чужого имущества, находящегося под охраной» заполнить его новыми словами следующего содержания: «или другими способами принуждения», сформулировать «требование», как это предусмотрено в статье 188 Уголовного кодекса НКР, следующим образом: «требование передачи чужого имущества или права на имущество или совершение других действий имущественного характера или воздержание от выполнения действий имущественного характера»; из состава преступления исключить оценочное понятие «существенное»; закрепить понятие «шантаж», выявив его содержание; в 1 пункте 2 части 188 статьи Уголовного кодекса НКР слова «с применением насилия в отношении лица или его родственников» заменить словами «осуществление угрозы, предусмотренной частью первой настоящей статьи»; предусмотреть такие отягчающие обстоятельства вымогательства, как использование оружия или предметов, используемых в качестве оружия, или использования должностного положения при выполнении вымогательства; вымогательство, совершенное путем причинения тяжкого вреда здоровью с приминением какой либо угрозы, не следует рассматривать как наиболее отягчающее обстоятельство вымогательства.

SUMMARY

ERIK ARZUMANYAN

THE MAIN ISSUES OF CRIMINAL LIABILITY FOR EXTORTION

This thesis is dedicated to the study of criminal-legal issues of extortion in the Republic of Nagorno-Karabakh. The actuality of the chosen theme, first of all, lies on the fact that at all times extortion has been a major obstacle for the vital activity of both the legal entities of any kind and physical persons, so the fight against extortion has been and will continue to be one of the priorities of the criminal policy of the state.

Particularly, the situation becomes more complicated as a result of the shortcomings and omissions that exist in the legislative field. The study of the NKR Criminal Code as well as the study of criminal proceedings shows that in many cases the ineffectiveness of the activity of the persons applying the law is conditioned by the imperfection of the legislative regulations.

Therefore, the scientific novelty of the research, first of all, is conditioned by the absence of a theoretical complex study of criminal-legal and criminological issues of the extortions that are being committed in NKR.

The author has made theoretical conclusions and has presented some proposals on making some amendments and additions to the Article 188 of the NKR Criminal Code aimed at the improvement of extortion corpus delicti.

Based on the above-mentioned necessity, the author has analyzed the extortion traits in accordance with the criminal legislation of NKR and foreign countries, has revealed the deficiencies in norms envisaging criminal penalties for extortion under the domestic law, has disclosed the demarcation traits of

extortion from the other related crimes, has studied the qualitative and the quantitative indices of the extortion in NKR: the situation (the level), the structure and the dynamics, has revealed the main directions of general-social and special criminological prevention of extortions in NKR and has elaborated theoretically substantiated recommendations aimed at the improvement of the NKR criminal current legislation and law enforcement.

In particular, the author has suggested expanding the disposition of the Article 188 of the NKR Criminal Code and after the words "with the threat of destroying (damaging) the property under protection" filling in with the following new words: "or by other means of enforcement", formulating the "claim" as defined in the Article 188 of the NKR Criminal Code as follows: "(...) the requirement to transfer someone else's property, to perform any other action of a kind of property or to refrain from the performance of the actions of a kind of property (...)", excluding the evaluative concept "substantial" from the corpus delicti, fixing the concept of "blackmail" discovering its contents, substituting the words "applying violence against a person or his close relative" of the Article 188 (2) (1) of the NKR Criminal Code with the words "by the implementation of threat envisaged in part 1 of this article", the provision of such aggravating circumstances of extortion, such as the use of weapons or objects used as weapons or the extortion performance by using the official position, the extortion committed by the implementation of threat causing serious harm to health should not be considered as the most aggravating circumstance of extortion.